

## Արձանագրություն N8

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 01.12.2018թ. նիստի

### Օրակարգ.

1. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
2. Ֆակուլտետի անվանափոխության հարցի քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 26-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝

Ռոմանական բանասիրության և Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնների վարիչները ներկայացրեցին անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց մեկ կիսամյակով անվանական կրթաթոշակի ներկայացնել հետևյալ ուսանողներին.

1. Բագրատունյան Անահիտ Արայի /Բսպաներեն լեզու և գրականություն, մագ. 2-րդ կուրս/ - Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ:
2. Գասպարյան Արփի Արտակի /Իտալերեն լեզու և գրակ., մագ. 2-րդ կուրս/ - Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ,
3. Մաղաքյան Լիլիթ Գուրգենի /Լեզվաբ. և միջմշակութային հաղորդակցություն, 3-րդ կուրս, բակ. / - Ն. Աճառյանի անվան կրթաթոշակ:

2. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի ղեկան և գիտխորհրդի նախագահ Ս. Աբրահամյանը զեկուցեց, որ ևս մեկ անգամ ամբիոնների, ինչպես նաև ԵՊՀ ղեկավարության հետ ֆակուլտետի անվանումը քննարկելուց հետո, առաջարկվել է ֆակուլտետի *Եվրոպական լեզուներ և հաղորդակցություն* նոր անվանումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ելույթ ունեցողները հիմնավորեցին *Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ* անվանումը, որն առավել ժամանակակից հնչողություն ունի, համահունչ է ֆակուլտետում արդիականացվող մասնագիտական ծրագրերին և պայմանավորված է եվրոպական ստանդարտներով ու արդի աշխատաշուկայի պահանջներով: Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոց. Ջ. Հարությունյանը նշեց, որ *Եվրոպական լեզուներ* տերմինը լայնորեն գործածվում է Եվրամիության արդի լեզվաքաղաքականությանը վերաբերող բոլոր փաստաթղթերում, իսկ *հաղորդակցություն* հասկացությունը՝ առանձին ամբիոնների և ֆակուլտետների անվանումների տեսքով, արդեն մուտք է գործել բազմաթիվ համալսարանների գիտաուսումնական համակարգ: Ներկայումս հաղորդակցության բազմաբովանդակ դրսևորումները, հետևապես նաև դրանց գիտական իմաստավորումները, աչքի են ընկնում ընդգծված միջգիտակարգայնությամբ և լայնորեն դիտարկվում են նաև *Լեզու*

և հաղորդակցություն հարացույցում: Նշված փաստը պայմանավորված է մասնագիտական գործունեության ամենատարբեր ոլորտներում հաղորդակցության ձևերի, մեթոդների և տեսակների կատարելագործման անհրաժեշտությամբ, ինչն էլ իր հերթին արդյունք է գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացի: Այսպիսով, վերոնշյալ անվանումը ներառում է ժամանակակից աշխարհում տիրապետող տեսական և գործնական բոլոր ուղղությունները: Դեկան Ս. Աբրահամյանը ավելացրեց, որ ֆակուլտետային նոր ծրագրերը ևս կազմվել են տվյալ անվանումը և համապատասխան մասնագիտությունները հաշվառելու սկզբունքով: Գիտխորհրդի անդամները նաև պատասխանեցին անվանափոխության վերաբերյալ ուսանողներին հուզող հարցերին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ձայների 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ արդյունքի հիման որոշվեց Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը վերանվանել՝ *Եվրոպական լեզուների և հաղորդակցություն ֆակուլտետ*:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՅԵՐ

Որոշեցին՝

- Հրատարակության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ. Աննա Կնյազյանի *Լեզու և գեներեր /լեզվական և հանրամշակութային դրսևորումներ/* դասագիրքը:
- Հրատարակության երաշխավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Մառա Բադդասարյանի *Լեզվականն ու արտալեզվականը քաղաքական էություն* մենագրությունը:
- Հավանություն տալ ԵՊՀ Արտասահմանյան գրականության ամբիոնի՝ ԵՊՀ-ում Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհուրդ ստեղծելու դիմումին:
- Հաստատել Գերմանական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Արգինե Բադայանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ, պրոֆ. Յու. Գաբրիելյանին:
- Հաստատել Միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հեռակա ասպիրանտ Նվարդ Տեր-Մինասյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ, պրոֆ. Ն. Հարությունյանին:
- Հաստատել Ֆրանսիական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Լիլիյա Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ, դոց. Ռ. Մելիքսեթյանին:
- Հաստատել Ռոմանական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Տաթևիկ Եղիազարյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավարի նշանակել հարցը բ.գ.թ, դոց. Հ. Բադդասարյանին:
- Հաստատել Ռոմանական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Մարիաննա Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավարի նշանակել հարցը բ.գ.թ, դոց. Հ. Բադդասարյանին:

- Երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Գոհար Մադոյանի «Հեղինակային հասկացության դաշտի քննությունը մենթալ տիրույթների և տեքստային աշխարհի տեսությունների դիտանկյունից» թեման ՀՀ Գիտության պետական կոմիտեի հայտարարած մրցութին ներկայացնելու համար:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

1 փետրվարի, 2018 թ.